



ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը անկախ կրթական և գիտահետազոտական կառույց է, որը ստեղծվել է Երևանի պետական համալսարանի և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության արդյունավետ համագործակցության արդյունքում: Կենտրոնը հիմնադրվել է 2006թ. հուլիսին և ֆինանսավորվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի կողմից տրամադրվող ամենամյա դրամաշնորհով: Կենտրոնը, լինելով ԵՄ ուսումնասիրությունների ոլորտում մասնագիտացած կրթական և գիտահետազոտական ինստիտուտ, իր առջև նպատակ է դրել բազմակողմանի և միջառարկայական հետազոտությունների, ինչպես նաև եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրերի իրագործման միջոցով խթանել ՀՀ – ԵՄ համագործակցությունը և նպաստել Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացին:

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը առաջարկում է բարձրորակ մագիստրոսական կրթություն Եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում, իրականացնում է նեղմասնագիտական և միջմասնագիտական հետազոտություններ ու տրամադրում է խորհրդատվություն ԵՄ հետ գործակցության մեջ գտնվող հանրային, ոչ կառավարական կազմակերպություններին ու մասնավոր ընկերություններին: Նշված գործառույթները իրականացնելու համար Կենտրոնը իր տանիքի ներքո համախմբել է ԵՄ ուսումնասիրությունների տարբեր ոլորտների բանիմաց մասնագետների, հյուրընկալում է գործընկեր համալսարաններից հրավիրյալ դասախոսներ, հետազոտողներ, փորձագետներ և ուսանողներ: Իր գործունեության կարճ ժամանակահատվածում Կենտրոնը պատրաստել և հրատարակել է մի շարք հետազոտություններ, արդյունավետ համագործակցություն է հաստատել հեղինակավոր Եվրոպական գիտա-հետազոտական կենտրոնների ու համալսարանների հետ, ծրագրում է իրականացնել նոր հետազոտություններ և տարածաշրջանային կրթական ծրագրեր:



□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□□

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի գործունեությունը ծավալվում է մի քանի հիմնական ուղվածություններով.

- կրթություն;
- միջմասնագիտական և նեղմասնագիտական գիտահետազոտական ուսումնասիրություններ;
- փորձագիտական վերլուծություն;
- ԵՄ տեղեկատվական կենտրոն (EUi)/Ռեսուրս կենտրոն:

---

□□□ □□□□□□□□□□

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տեսլականն է Հայաստանը Եվրոպայում, ինչը ենթադրում է՝

- գիտելիքի վրա հիմնված հասարակություն;
- հետազոտության վրա հիմնված կառավարում;
- իրազեկված հասարակություն:

000 0000000000000000

- խթանել ՀՀ-ԵՄ համագործակցության խորացմանը և աջակցել Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացին;
- բարձրորակ և մրցակցային կրթություն տրամադրելու միջոցով նպաստել գիտելիքների և եվրոպական արժեքների վրա հիմնված հասարակության ձևավորմանը;
- մասնագիտական և ներմասնագիտական բնույթի գիտապրակտիկ հետազոտությունների միջոցով նպաստել Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

000000000 0000000000

[Աղմինիստրատիվ անձնակազմ](#)

[Միջազգային փորձագետներ](#)

[Ավագ փորձագետներ](#)

[Փորձագետներ](#)

[Դասախոսներ](#)

[սլհգբ&nbsp;↑](#)